



ՔՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 03 » *Տարիք* 2019 թ. N 147-Ձ

ՔՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 22-րդ հոդվածով, կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշման 10-րդ և 11-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 26-րդ կետի 11-րդ ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Նշանակել ծառայողական քննություն բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության ջրօգտագործման թույլտվությունների բաժնի առաջատար մասնագետ Արտակ Գրիգորյանի կողմից Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի բնակիչ Ա. Գասպարյանին ոռոգման նպատակով տրված թիվ 000051 ջրօգտագործման թույլտվության ժամկետի երկարաձգման պատասխան գրության (ապրիլի 2-ին N 1/18.2/10751-19) մեջ տեղ գտած թերությունների դեպքով:

Ծառայողական քննության ընթացքում պարզաբանման ենթակա հարցերն են.

- 1) գրության բովանդակության համապատասխանությունն իրավական ակտերին,
- 2) գրության պատասխանը համապատասխան բովանդակությամբ ներկայացնելու պատճառները:

2. Ծառայողական քննության վարող նշանակել իրավաբանական վարչությանը:

3. Ծառայողական քննությունը նշանակվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու

օրը:

4. Ծառայողական քննությունն անցկացվում է 30 օրացուցային օրվա ընթացքում՝ սույն հրամանն ստորագրելու պահից:

5. Ծառայողական քննությունն անցկացնել հանգամանքների ստուգմամբ, համադրմամբ, պարզաբանմամբ և արդյունքների հիման վրա սահմանված ժակետներում կազմել և ներկայացնել եզրակացություն:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Վ. ԶԻԼԱՎՅԱՆ